ՏԵՂԵԿԱՆՔ

“ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ” ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Հայաստանի Հանրապետության կառավարության և Սերբիայի Հանրապետության կառավարության միջև պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի նախագիծը (այսուհետ՝ Համաձայնագրի նախագիծ) ստացվել է սերբական կողմից (ՀՀ ԱԳՆ 27.07.2015թ. No. 1111/07631 գրություն), որից հետո այն թարգմանվել է հայերեն ու անցկացվել է ինչպես նախնական ներգերատեսչական համաձայնեցման գործընթաց ՀՀ պաշտպանության նախարարության շահագրգիռ ստորաբաժանումներում, այնպես էլ նախնական ներպետական համաձայնեցման գործընթաց ՀՀ շահագրիգռ այլ գերատեսչությունների հետ:

Համաձայնագրի նախագծի նպատակն է Կողմերի միջև պաշտպանության բնագավառում հաստատել համագործակցության հիմնական սկզբունքներն ու ընթացակարգերը՝ հիմնված հավասարության, փոխադարձության և փոխշահավետության սկզբունքների վրա:

Համաձայնագրի նախագով սահմանում են Կողմերի միջև համագործակցության ոլորտները (մասնավորապես՝ պաշտպանական անվտանգություն, ռազմատնտեսական համագործակցություն, ռազմահիրավական ոլորտի համագործակցություն, խաղաղապահ առաքելություններ, ռազմական գիտատեխնիկական համագործակցություն, ռազմական կրթություն և վարժանք, ռազմական բժշկություն և այլն), համագործակցության իրականացման ձևերը (պաշտոնական պատվիրակությունների այցեր, աշխատանքային հանդիպումներ, փորձի փոխանակում և խորհրդատվություններ, վարժական և կրթական ծրագրեր, մասնակցություն գիտաժողովներին և սեմինարներին և այլն), դրանց ֆինանսավորման կարգը և այլ խնդիրներ:

Կողմերը, Համաձայնագրի դրույթների իրագործման նպատակով, սահմանել են լիազորված մարմիններ (հայկական կողմից՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը և սերբական կողմից՝ ՍՀ պաշտպանության նախարարությունը):

Կողմերը, համագործակցության ծավալների ավելացման պարագայում, Համաձայնագրում նախատեսում են երկու երկրներում ռազմական ներկայացուցչության (կցորդության) ստեղծման հնարավորություն:

Համաձայնագրի դրույթներով Կողմերը պարտավորվում են փոխադարձության սկզբունքով հոգալ միջոցառումների իրականացման համար նախատեսված ծախսերը՝ միաժամանակ սահմանելով միջոցառումների ծախսերի բաշխման այլ ձևի հնարավորությունը:

Քննարկվող Համաձայնագիրը նախատեսվում է կնքել անորոշ ժամկետով: Կողմերից յուրաքանչյուրը հնարավորություն կունենա դադարեցնել դրա գործողությունը՝ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով մյուս Կողմին:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև Սերբիայի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ պաշտպանության բնագավառում փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող համագործակցության ձևավորումն ու հետագա զարգացման հնարավորությունը՝ ՀՀ պաշտպանության նախարարությունը նպատակահարմար է համարում սկսել «Հայաստանի Հանրապետության կառավարության և Սերբիայի Հանրապետության կառավարության միջև պաշտպանության բնագավառում համագործակցության մասին» համաձայնագրի կնքման նպատակով անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը:

ՀՀ պաշտպանության նախարար

Ս. ՕՀԱՆՅԱՆ